

Քննական Թեստ 2
«Մարդու կազմաբանություն և ֆիզիոլոգիա» առարկայից

Հարգելի՛ դիմորդ,
ուշադիր կարդացե՛ք առաջադրանքները, ընտրե՛ք ճիշտ պատասխանները և անցկացրե՛ք **Պատասխանների ձևաթղթի** մեջ: Մաղթում ենք հաջողություն:

1. Մարզումները լավ են ազդում.

1) միայն մկանների; 2) միայն ոսկրերի; 3) ամբողջ օրգանիզմի; 4) միայն սրտի վրա:

2. Հումորալ կարգավորումը իրականանում է.

1) արյան միջոցով օրգանների և համակարգերի քիմիական փոխազդեցությամբ; 2) ֆերմենտ արտադրող գեղձերին նյարդային ազդակի փոխանցմամբ; 3) օրգանիզմից թունավոր նյութերի հեռացմամբ; 4) ֆերմենտների ազդեցությամբ նյութերի ճեղքմամբ:

3. Նյարդային համակարգը կազմված է բջիջներից, որոնց անվանում են.

1) արսոն; 2) նեյրոն; 3) դենդրիտ; 4) մեղիատոր:

4. Ուղեղիկի վնասումը կարող է հանգեցնել.

1) շարժումների կոորդինացիայի; 2) տեսողության; 3) շնչառական օրգանների գործունեության; 4) արյան շրջանառության օրգանների գործունեության խանգարման:

5. Օրգանիզմի ներքին հեղուկ միջավայրը կազմում են.

1) արյունը, ավիշը, հյուսվածքային հեղուկը; 2) մարմնի խոռոչները; 3) ներքին օրգանները; 4) ներքին օրգանները կազմող հյուսվածքները:

6. Մարդու արյան պլազմայի բաղադրության մեջ մտնում են.

1) էրիթրոցիտները; 2) արյան շիճուկը; 3) թրոմբոցիտները; 4) լեյկոցիտները:

7. Արյան շրջանառության ցանկացած շրջան սկսվում է.

1) նախասրտերից որևէ մեկից; 2) փորոքներից որևէ մեկից; 3) նախասրտից կամ փորոքից; 4) ներքին օրգանների հյուսվածքներից:

8. Ածխաթթու գազն առաջանում է.

1) թոքերում; 2) մարմնի բջիջներում; 3) շնչուղիներում; 4) էրիթրոցիտներում:

9. Սննդի ճեղքումը մարսողական խողովակում տեղի է ունենում.

1) հորմոնների; 2) վիտամինների; 3) ֆերմենտների; 4) նուկլեինաթթուների ազդեցությամբ:

10. Լեղին առաջանում է.

1) լեղապարկում; 2) լյարդում; 3) 12-մատնյա աղիքում; 4) ենթաստամոքսային գեղձում:

11. Նյութափոխանակության վերջնական արգասիքներն օրգանիզմից հեռանում են.

1) մեզոլ և կղանքով; 2) քրտինքով; 3) արտաշնչվող օդով; 4) ճիշտ են բոլոր պատասխանները:

12. Մաշկը կատարում է պաշտպանական ֆունկցիա, քանի որ նրա մեջ գտնվում են.

1) ընկալիչներ; 2) գունակ մեղանիս; 3) քրտնագեղձեր; 4) բոլոր պատասխանները ճիշտ են:

13. Մարդու գանգի ոսկրերը միացած են.

1) անշարժ; 2) շարժուն և անշարժ; 3) կիսաշարժուն և շարժուն; 4) կիսաշարժուն և անշարժ:

14. Ի՞նչպես են մկանները միանում ոսկրերին.

1) փորիկով; 2) ջլերով; 3) գլխիկով; 4) հողապարկով:

15. Ճիշտ կեցվածքը.

1) առաջանում է ինքնուրույն; 2) փոխանցվում է ժառանգաբար; 3) ձևավորվում է վաղ

մանկությունից; 4) կախված է մարդու տարիքից:

16. Մարդու աչքի մեջ լույսի ճառագայթների անցումը կարգավորում է.

1) ցանցաթաղանթը; 2) ոսպնյակը; 3) եղջերաթաղանթը; 4) բիբը:

17. Լսողական ընկալիչները գտնվում են.

1) խիունջում; 2) ձվաձև պատուհանի վրա; 3) կիսաբոլոր խողովակներում; 4) լսողական ոսկրիկների վրա:

18. Պայմանական ռեֆլեքսները.

1) առանց ամրապնդման մարում են; 2) փոխանցվում են ժառանգաբար; 3) բնածին են; 4) ճիշտ պատասխանը բացակայում է:

19. Սրտի բոլորաշրջանը տևում է 0.8 վրկ: 10 ժամվա ընթացքում առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում նախասրտերը քանի՞ րոպե են կծկվում.

1) 75; 2) 225; 3) 335; 4) 525:

20. Սրտի բոլորաշրջանը տևում է 0.8 վրկ: 10 ժամվա ընթացքում առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում նախասրտերը քանի՞ րոպե են հանգստանում.

1) 75; 2) 225; 3) 335; 4) 525: